

ՀԲՄ անդամ բանկերի 2006 թ.-ի գործունեության համառոտ վերլուծություն


ՀՀ համակարգի բանկերի բնականոն և արդյունավետ գործունեության արդյունքում 2006 թ.-ի ընթացքում հիմնական ցուցանիշների գծով արձանագրվել է զգալի աճ:

ՀԲՄ անդամ բանկերի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 19.71 %-ով, տարեվերջին կազմելով մոտ 494.7 մլրդ դրամ (համակարգում ակտիվների աճը՝ 20.07 %, իսկ ծավալը՝ 544.2 մլրդ դրամ), որը հիմնականում պայմանավորված է վարկային ներդրումների, ինչպես նաև պետական գանձապետական պարտատոմսերում ներդրումների աճով: Տարվա կտրվածքով վարկային ներդրումները աճել են 19.87 %-ով կամ 38.3 մլրդ դրամով (համակարգում՝ 21.23 % կամ 44.6 մլրդ դրամ), իսկ ներդրումները պետական գանձապետական պարտատոմսերում՝ 38.27 %-ով կամ 22.1 մլրդ դրամով (համակարգում՝ 35.46 % կամ 23.1 մլրդ դրամ), տարեվերջին կազմելով 80.0 մլրդ դրամ (համակարգում՝ 88.2 մլրդ դրամ): Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 231.4 մլրդ դրամի (համակարգում՝ 254.5 մլրդ դրամ), որը կազմում է ՀԲՄ բանկերի ընդհանուր ակտիվների 46.78 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 52.9 %-ը կամ 122.4 մլրդ դրամ և այս ցուցանիշը 2006 թ.-ի ընթացքում նվազել է 11.82 տոկոսային կետով: Նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց տրված վարկերը աճել են 10.64 %-ով, կազմելով 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 89.1 մլրդ դրամ, տեղին է նշել, որ ֆիզիկական անձանց վարկերի աճը կապված է սպառողական և հիփոթեքային շուկաներում առևտրային բանկերի ակտիվացման հետ: Տարեվերջին ընդհանուր վարկային ներդրումների 27.81 %-ը կամ 64.4 մլրդ դրամը կազմել է ազգաբնակչության սպառողական կարիքների համար առևտրային բանկերի կողմից ուղղված վարկային միջոցները, որը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 22.95 %-ով կամ 12.0 մլրդ դրամով: Իսկ հիփոթեքային վարկային պորտֆելը հաշվետու տարվա վերջում կազմել է 21.4 մլրդ դրամ կամ վարկային ներդրումների 9.26 %-ը, աճը 2006 թ.-ի ընթացքում կազմել է 116.22 % կամ 11.5 մլրդ դրամ: Վարկային ներդրումների ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանկերը 2006 թ.-ի ընթացքում առաջնահերթություն են տվել նաև հիփոթեքային վարկավորմանը:

Տնտեսությանը վարկավորման ամենամեծ ծավալները ապահովել են՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը՝ 22.3 մլրդ դրամ, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Չայաստան Բանկը՝ 15.4 մլրդ դրամ, Արդշինինվեստբանկը՝ 14.1 մլրդ դրամ, ՎՏԲ Չայաստան Բանկը՝ 12.4 մլրդ դրամ և Յունիբանկը՝ մոտ 9.0 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց վարկավորման գծով առաջադար դիրքերում են գտնվում՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Չայաստան Բանկը, որը ապահովել է՝ 15.0 մլրդ դրամ, Արդշինինվեստբանկը՝ 9.8 մլրդ դրամ, ՎՏԲ Չայաստան Բանկը՝ 9.2 մլրդ դրամ, ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը՝ 8.8 մլրդ դրամ և Ինեկոբանկը՝ 7.6 մլրդ դրամ: Բանկերից, ընդհանուր վարկային ներդրումների մեջ, ֆիզիկական անձանց վարկերի ամենամեծ տեսակարար կշիռը ապահովել է Առեքսիմբանկը՝ 65.78 % կամ 5.0 մլրդ դրամ, որը հետևանք է շուկայում մեքենաների վարկավորման գծով բանկի ունեցած առաջատար դիրքով, որտեղ ներդրել է իր վարկային պորտֆելի մոտ 40 %-ը կամ 2.7 մլրդ դրամ:


Պետական գանձապետական պարտատոմսերում ամենամեծ ներդրումները ունեն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Չայաստան Բանկը՝ 19.4 մլրդ դրամ և Արդշինինվեստբանկը՝ 14.6 մլրդ դրամ, տարվա ընթացքում նշված ցուցանիշի ամենաշատ աճ ապահովել է ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը՝ 135.84 %:

ՀԲՄ անդամ բանկերի ակտիվները և վարկային ներդրումները
2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ



2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀԲՄ բանկերի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 384.5 մլրդ դրամ (համակարգում՝ 424.1 մլրդ դրամ), որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 17.6 %-ով (համակարգում՝ 18.35 %): Տվյալ ցուցանիշի տարեկան աճը պայմանավորված է բանկերի ցպահանջ պարտավորությունների և իրավաբանական ու ֆիզիկական անձանց ժամկետային դեպոզիտների՝ 11.72 % կամ 18.7 մլրդ դրամ և 19.71 % կամ 22.5 մլրդ դրամ համապատասխան ավելացումներով, որոնք տարեվերջին կազմել են համապատասխանաբար՝ 152.5 և 136.5 մլրդ դրամ (համակարգում՝ 166.7 և 150.2 մլրդ դրամ), ընդ որում նշված ցուցանիշների տեսակարար կշիռները ընդհանուր պարտավորություններում կազմել է 39.68 և 34.81 տոկոս: Ցպահանջ պարտավորությունների աճ նկատվում է համարյա բոլոր բանկերի մոտ, սակայն տարեկան կտրվածքով այս ցուցանիշի ամենամեծ աճ ապահովել է Պրոմեթեյ բանկը՝ 115.5 %, որը բացարձակ մեծությամբ տարեվերջին կազմել է 2.8 մլրդ դրամ: Իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային դեպոզիտների գծով տարվա ընթացքում ամենաշատ ավելացում գրանցվել է Հայբիզնեսբանկի կողմից՝ 289.27 %, որը տարեվերջին կազմել է 3.3 մլրդ դրամ: Այնուամենայնիվ պետք է նշել, որ ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկը Արդշինինվեսթբանկն է՝ 28.2 մլրդ դրամ, այնուհետև մեծ տարբերությամբ նրան հաջորդում են Յունիբանկը՝ 16.3 մլրդ դրամ, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 16.2 մլրդ դրամ, ՎՏԲ Հայաստան բանկը՝ 14.8 մլրդ դրամ և ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը՝ 11.0 մլրդ դրամ: Թվարկված բանկերից վերոհիշյալ ցուցանիշի լավագույն աճ տարեկան կտրվածքով ապահովել են Յունիբանկը և Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը համապատասխանաբար 66.56 և 62.48 %-ով: Մինևույն ժամանակ կարելի է նշել, որ 2006 թ.-ի ընթացքում ֆիզիկական անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) ավելացել են 19.04 %-ով, կազմելով դեկտեմբերի 31-ի դրությամբ 132.9 մլրդ դրամ: Նշված ցուցանիշի առավելագույն ծավալ տարեվերջին գրանցվել է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկի կողմից, ապահովելով 37.6 մլրդ դրամ: 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր պարտավորություններում կազմել է 34.56 տոկոսը:

ՀԲՄ անդամ բանկերի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ




ՀԲՄ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 27.73 %-ով, տարեվերջին կազմելով 110.2 մլրդ դրամ (համակարգում՝ 120.1 մլրդ դրամ), որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական հիմնադրամի ավելացման հաշվին: Վերոհիշյալ բանկերի կուտակված շահույթը 2006 թ.-ի ընթացքում աճել է 30.51 տոկոսով, տարեվերջին կազմելով մոտ 24.7 մլրդ դրամ (համակարգում՝ 28.8 մլրդ դրամ), ընդ որում կուտակված շահույթի տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում կազմել է 22.39 %, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել է 0.48 տոկոսային կետով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղադրիչը՝ կանոնադրական հիմնադրամը, տարվա ընթացքում աճել է 36.02 %-ով, կազմելով 74.8 մլրդ դրամ (համակարգում՝ 80.1 մլրդ դրամ), կամ ընդհանուր կապիտալի 67.9 %-ը, նախորդ տարվա համեմատ գրանցվել է տեսակարար կշռի աճ 4.14 տոկոսային կետով:

Կուտակված շահույթի ցուցանիշով առաջատարը Կոնվերս բանկն է՝ 5.5 մլրդ դրամ գուարով, բանկը 2006 թ.-ի ընթացքում ապահովել է 27.58 %-ի աճ: Նրան անմիջապես հաջորդում են՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 4.5 մլրդ դրամ (աճը 26.69%), Անելիք բանկը՝ 4.4 մլրդ դրամ (աճը 26.02 %), Ինելկոբանկը՝ 2.4 մլրդ դրամ (աճը 14.64 %) և Արդշինհիմնվեստբանկը՝ 2.1 մլրդ դրամ (նվազ. 53.03 %): Անցած տարվա կտրվածքով կուտակված շահույթի նշանակալից աճ ապահովել է ԱրմՍվիսԲանկը՝ 331.1 տոկոս՝ կուտակված շահույթի մեծությամբ հասցնելով 51.1 մլն դրամի, նախորդ տարվա 21.1 մլն. դրամ վնասի դիմաց:

ՀԲՄ բանկերի թվում 2006 թ.-ի ընթացքում կանոնադրական հիմնադրամի համալրման գծով աննախատեսա՝ աճ է ապահովել ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը՝ 858.84 տոկոս, բանկի կանոնադրական հիմնադրամը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է մոտ 14.57 մլրդ դրամ: Նույն ցուցանիշի համալրման երկրորդ և նշանակալից աճ ապահովել է Արդշինհիմնվեստբանկը՝ 145.03 տոկոս: Ընդհանուր առմամբ անցած տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամի համալրում իրականացվել է 8 բանկերի կողմից:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ըստ ընդհանուր կապիտալի մեծության առաջին հնգյակը կազմել են՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը՝ 18.3 մլրդ դրամ, Արդշինհիմնվեստբանկը՝ 11.1 մլրդ դրամ, Կոնվերս բանկը՝ 9.6 մլրդ դրամ, ՎՏԲ-Հայաստան Բանկը՝ 9.3 մլրդ դրամ և Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 7.2 մլրդ դրամ: Միաժամանակ հարկ է նշել, որ վերը թվարկված բանկերից ընդհանուր կապիտալի ամենամեծ աճը ապահովվել է ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի կողմից՝ 141.31 տոկոս:

ՀԲՄ անդամ բանկերի ընդհանուր կապիտալը, կանոնադրական հիմնադրամը և կուտակված շահույթը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ



ՀԲՄ բանկերի կողմից հաշվետու տարվա ընթացքում ապահովել է 15.47 մլրդ դրամ մաքուր շահույթ (համակարգում՝ 17.1 մլրդ դրամ), որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցել է 4.68 մլրդ դրամով կամ 43.43 %-ով: 2006 թ.-ի ընթացքում վերոհիշյալ բանկերի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 16.44 %-ով կամ 14.1 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 13.2 %-ով կամ 8.7 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով համապատասխանաբար 85.5 և 66.1 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 19.4 մլրդ դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա համանուն ցուցանիշից ավելի է 13.7 %-ով կամ 2.3 մլրդ դրամով: Հաշվետու տարում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը Արդշինհիմվեստբանկն է համապատասխանաբար՝ 16.1 և 13.5 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալ ապահովել է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 3.7 մլրդ դրամ: Ընդհանուր առմամբ ՀԲՄ բանկերը, առանց բացառության, 2006 թ.-ը ավարտեցին շահույթով: Ստացված մաքուր շահույթի ծավալով առաջի տեղում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 2.86 մլրդ դրամ, այնուհետև՝ Արդշինհիմվեստբանկը՝ 2.1 մլրդ դրամ, ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը՝ 1.6 մլրդ դրամ, Կոնվերս բանկը՝ 1.4 մլրդ դրամ և Ինեկոբանկը՝ 1.0 մլրդ դրամ:

2005 թ.-ի արդյունքներով ՀԲՄ բանկերի մաքուր շահույթը կազմել է 10.8 մլրդ դրամ (համակարգում 12.1 մլրդ դրամ), առաջատար եռյակում էին՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 2.75 մլրդ դրամ, Արդշինհիմվեստբանկը՝ 2.27 մլրդ դրամ և Կոնվերս բանկը՝ 1.73 մլրդ դրամ: Վերը բերված տվյալներից հետևում է, որ եռյակի բանկերից միայն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկին է հաջողվել նախորդ տարվա համեմատ 2006 թ.-ի ընթացքում ապահովել մաքուր շահույթի աճ, որը կազմել է 4.0 տոկոս: Այս ցուցանիշը Կոնվերս բանկի մոտ նվազել է 19.1 տոկոսով, իսկ Արդշինհիմվեստբանկի մոտ՝ 7.49 տոկոսով: Վերոհիշյալ տարում ՀԲՄ անդամ բանկերից 15-ը աշխատել է շահույթով, որոնց համախմբված մաքուր շահույթը կազմել է 12.3 մլրդ դրամ, իսկ վնասով աշխատած չորս բանկերի վնասը՝ 1.5 մլրդ դրամ:

2006 թ.-ի արդյունքներով ՀԲՄ բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 14.04 տոկոս, աճը տարեկան կտրվածքով 1.54 տոկոսային կետ, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 3.13 տոկոս, աճը տարեկան կտրվածքով 0.52 տոկոսային կետ: Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքը տարվա ընթացքում ապահովել է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան բանկը՝ 39.35 տոկոս, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ Արարատ Բանկը՝ 10.63 տոկոս:

Վերլուծական նյութում արտացոլված 2006 թ.-ի ցուցանիշները պարունակում են նաև բանկերի դուստր կառուցվածքների տվյալները, իսկ 2005 թ.ի ցուցանիշները՝ միայն ԱՆԵԼԻՔ բանկի մոսկովյան «ԱՆԵԼԻՔՌՈՒ» դուստր բանկի տվյալները:

ՀԲՄ անդամ բանկերի ամփոփ ցուցանիշները
ըստ տարիների

